Таким образом, несмотря на наличие определенных различий, у исследуемых форм в изученных вариантах сформирована гомогенная пыльца с преобладанием пылинки средних размеров, с тремя апертурами, с типичной трехмерной формой, со средними значениями коэффициента вариации.

У всех таксонов при наличии некоторой вариабельности уровень фертильности находится в пределах нормы. Возможно, в природных популяциях исследуемых таксонов семейства *Rosaceae* Juss., произрастающих в окрестностях АЛЭС, проявлялся феномен адаптации, о чем имеются сведения и в других исследованиях [2, 9, 12].

Таким образом, по уровню фертильности исследуемые генотипы можно разделить на три группы: низкая (абрикос), средняя (вишня) и высокая (алива, яблоня) степени фертильности. Морфологические различия отражались и в виде различия коэффициентов вариации изученных признаков. Различий по пунктам исследования не зарегистрировано. Полученные данные могут представлять интерес при изучении разных генотипов плодовых, а также при выборе объектов для биоиндикации ксенобиотиков.

ЛИТЕРАТУРА

1. Гераськин С.А., Дикарев В.Г., Дикарева Н.С., Удалова А.А. Генетика, 32, 2, 272-278, 1996.
2. Дмитриева С.А. Цитология и генетика, 30, 4, 3-8, 1996.
3. Еравдьян С.Г., Певин А.А., Симонян Е.Г., Арутюнян Р.М. Экология, 4, 314-317, 2005.
4. Куриный А.И. Цитология и генетика, 17, 4, 32-35, 1983.
5. Лакис Г.Ф. Биометрия. М., "Высшая школа", 352 с., 1990.
6. Лях В.Д. Цитология и генетика, 29, 6, 76-82, 1985.
7. Паушева В.П. Практикум по цитологии растений. М., Агроиздат, 256 с., 1988.
8. Плохинский И.М. Математические методы в биометрии. Изд-во Московского университета, 250-254, 1978.
9. Шевченко В.А., Абрамов В.Н., Кальченко В.А. и др. Радиобиология, 36, 531-536, 1996.
10. Constantin M.S. In: Genotoxic Effect of Airborne systems with potential for the detection of atmospheric mutagens, Oak Ridge, TN, USA, 159-177, 1984.
11. Onaviano E., Surigoffa M., Mutcahy I. Structure, function and use in biol. and medicine. Wiley-Less inc., 575-588, 1990.
12. Shevchenko V.A. International conference "Unification and optimization of radiation monitoring on NPP location regions", Armenia, Yerevan, September 22-26, 113-121, 2004.

Поступила 21.VI.2006

Биолог. журн. Армении, 3-4 (58), 2006

УДК 502.75 (479.25)

ՄՇԱԿԱՐՈՒՅԱԼՆԻ ՎԱՅՐԻ ԳԵՂԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱԳԵՐԹ ՊԱՅՊԱՆԱՆ ԵՆՈՍՎԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Լ.Ռ. ԱՅՈՐՅԱՆ, Լ.Խ. ՍԱԳՍԿՅԱՆ, Ա.Կ. ԵՆԵՏԵՐԵՃՅԱՆ

Բնության պահպանության նախարարություն, 375008, Երևան

Հայաստանի մշակաբույսերի վայրի ցեղակիցների (ՍՎԳ) հսկայական գենոֆոնդում կան շուրջ 521 տեսակ և տարատեսակ. որոնցից շատերը գտնվում են ոչնչացման եզրին կամ խիստ հազվագյուտ են: Որոշ տեսակներին այսօր վտանգ չի սպառնում, սակայն դրանք մեծ արժեք են ներկայացնում, և դրանց գերշահագործումը կարող է լուրջ հետևանքների հանգեցնել: Այդ իսկ նպատակով «Մշակաբույսերի վայրի ցեղակիցների *in-situ* պահպանությունը տեղեկատվության կատարելագործված կառավարման և գործնական կիրառման միջոցով» ծրագրի շրջանակներում, հաշվի առնելով գյուղատնտեսական և բնապահպանական բարձր նշանակություն ունեցող հատկանիշները, ընտրվել է առաջնահերթ պահպանման ենթակա 7 տեսակ. ցորեն արարտական - *Triticum araraticum* Jakubz., ցորեն վայրի միահատիկ - *Triticum boeoticum* Boiss., ցորեն ուրարտական - *Triticum urartu* Thum.ex Gandil., այծակն թաուշի - *Aegilops tauschii* Coss., ճակնդեղ բաժանապտուղ - *Beta lomatogona*, վավիլովիա նրբագեղ - *Vavilovia formosa* (Siev.) Fed., տանձենի կովկասյան - *Pyrus caucasica* Fed.:

В обширном генофонде диких сородичей культурных растений Армении насчитывается около 521 вида и разновидностей, многие из которых находятся на грани исчезновения или очень редки. Они представляют большую ценность, и хотя сегодня многим видам опасность не грозит, однако их чрезмерная эксплуатация может привести к нежелательным последствиям. В рамках программы "In-situ охрана диких сородичей культурных растений путем улучшения информации и практического применения", учитывая качества, имеющие большую сельскохозяйственную и природоохранную ценность, были избраны 7 видов, нуждающихся в первоочередной охране: пшеница араратская - *Triticum araraticum* Jakubz., пшеница боетийская - *Triticum boeoticum* Boiss., пшеница урарту - *Triticum urartu* Thum.ex Gandil., эгилопс тауша - *Aegilops tauschii* Coss., свекла раздельноплодная - *Beta lomatogona*, вавилония изящная - *Vavilovia formosa* (Siev.) Fed., груша кавказская - *Pyrus caucasica* Fed.

There are about 521 Crop Wild Relatives (CWR) species and subspecies in rich gene pool of Armenia and some of them are critically endangered or rare. Today some species are not endangered though they represent great value and their overexploitation can bring to serious consequences. Within the scope of "In-situ Conservation of Crop Wild Relatives Through Enhanced Information and Field Application" project it has been selected 7 priority species for conservation (*Triticum araraticum* Jakubz., *Triticum boeoticum* Boiss., *Triticum urartu* Thum.ex Gandil., *Aegilops tauschii* Coss., *Beta lomatogona*, *Vavilovia formosa* (Siev.) Fed., *Pyrus caucasica* Fed.), which have agricultural and environmental high attributes.

Բնապահպանություն - մշակաբույսերի վայրի ցեղակիցներ -
առաջնահերթ տեսակներ

Հաշվի առնելով մշակաբույսերի վայրի ցեղակիցների օգտակարությունը

անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ դրանց պահպանման և ռացիոնալ օգտագործման համար:

Հայաստանի Հանրապետության ՄՎՑ-ների հսկայական գենոֆոնդում կան դրանց շուրջ 521 տեսակ և տարատեսակ, որոնցից շատերը գտնվում են ոչնչացման եզրին կամ խիստ հազվագյուտ են: Որոշ տեսակներին այսօր վտանգ չի սպառնում, սակայն դրանք մեծ արժեք են ներկայացնում և դրանց գերշահագործումը կարող է լուրջ հետևանքների հանգեցնել: Այդ մտահոգությունից ելնելով «Մշակաբույսերի վայրի ցեղակիցների *in-situ* պահպանությունը տեղեկատվության կատարելագործված կառավարման և գործնական կիրառման միջոցով» ծրագրի շրջանակներում, հաշվի առնելով գյուղատնտեսական և բնապահպանական բարձր նշանակություն ունեցող հատկանիշները, ընտրվել է առաջնահերթ պահպանման ենթակա 7 տեսակ, որոնցից 4-ը հացազգիներ են: Հասկավորների նկատմամբ մեծան հատուկ մոտեցումը պայմանավորված է մեր հանրապետության աշխարհագրական և կլիմայական պայմաններով, ինչը և նախապայման է հանդիսացել, որպեսզի աշխարհում հայտնի վայրի ցորենի 4 տեսակներից 3-ը աճեն Հայաստանում: Ցորենի այդ տեսակների, ինչպես նաև այծակն թաուշի մեկական պոպուլյացիա պահպանվում են «Էրեբունի» արգելոցում:



Ցորեն արարատյան - *Triticum araratlicum* Jakubz. - Հարավային Կովկասի հազվագյուտ ենդեմիկ տեսակ է: Հայաստանում հանդիպում է Երևանի և Եղեգնաձորի բուսաբանական շրջաններում: Կովկասում հանդիպում էր միայն Նախիջևանի Ազնաբերդի շրջանում, Արևմտյան Անատոլիայում: Հայտնի են միջին և ուշահաս ձևեր: Բնորոշվում է բարձր չորադիմացկունությամբ: Օգտագործվում է սելեկցիայում բարձր սպիտակուցային ցորենի սորտերի ստեղծման համար: Ունի մեծ տեսական և գիտական նշանակություն:



Ցորեն վայրի միահատիկ - *Triticum boeoticum* Boiss. - Այս տեսակն ավելի լայն տարածում ունի. քան վայրի ցորենի մյուս տեսակները, սակայն աճելավայրը գերշահագործման հետևանքով խիստ կրճատվում է:

Աճում է Դրիմում, Բալկաններում, Սիրիայում, Պաղեստինում, Թուրքիայում, Իրանում, Իրաքում, իսկ Հայաստանում՝ Երևանի և Եղեգնաձորի բուսաբանական շրջաններում:

Հայտնի են միջին և ուշահաս ձևերը: Արժեքավոր է բարձր չորադիմացկունության, սնկային հիվանդությունների նկատմամբ կայունության և այլ հատկանիշներով: Նկատելի փոփոխականության շնորհիվ հանդիսանում է հարուստ գենետիկական ֆոնդ գիտական հետազոտությունների համար:



Ցորեն ուրարտական - *Triticum urartu* Thum.ex Gandl - հիստ հազվագյուտ տեսակ է: Հայաստանի տարածքում աճում են եգակի փոքր պոպուլյացիաներ:

Հանդիպում է Ջրվեժ, Ողջաբերդ և Ձորաղբյուր գյուղերի միջև ընկած տարածքներում: Հանդիպում է նաև Թուրքիայում, Լիբանանում և Իրանում:

Համարվում է, որ այն տեսորապիղի և հեքսապիղի ցորենի առաջին զենմոմի (զենմոմ A) ղոնորն է, այսինքն հանդիսանում է այդ ցորենների նախահայրը, և դրա պահպանումը համաշխարհային կարևոր խնդիր է:



Այծակն քաուշի - *Aegilops tauschii* Coss - Հայաստանը համընկնում է *Aegilops* ցեղի աճելավայրի կենտրոնական մասի հետ: Այն առավել հաճախ հանդիպում է վայրի ցորենի տարածման աճելավայրերում: *Aegilops*-ների հանդեպ վերջին շրջանում առանձնակի հետաքրքրությունը պայմանավորված է տեսորապիղի և հեքսապիղի ցորենների առաջացման գործում դրանց ունեցած դերի վերաբերյալ ցիտոլոգիական ապացույցներով: Պրանով իսկ մեծանում է ցեղի գենետիկա-սելեկցիոն նշանակությունը: Այծակն

քաուշին հանդիսանում է հեքսապիղի ցորենի D զենմոմի ղոնորը: Ունի մանր և խոշոր հասկավոր տարատեսակներ: Նկատվել է այս տեսակի սպոնտան խաչասերում մշակովի ցորենի տեսակների հետ:



Նակնդեղ բաժանապտուղ - *Beta lomatogona* - Միջին ասիական տեսակ է: Պոպուլյացիաները հանդիպում են բարձր լեռնային շրջաններում: Աճում է չոր լանջերին առաջացնելով բուսական փոքրախմբեր: Հանդիսանում է արժեքավոր անասնակեր, շաքարի պարունակությունը հասնում է 20-30 %: Ունի մեծ գյուղատնտեսական նշանակություն: Վերջին տասնամյակներում հայկական պոպուլյացիաները կրճատվել են ավելի

ջան հինգ անգամ: Կրճատման հիմնական պատճառներն են աճման վայրերի զերշահագործումը, գերարածեցումը, հողերի էրոզիան: Աճելավայրերից մնացել են Ակունք, Ջարինջա (ՀՀ Արագածոտնի մարզ) և Չիթհանքով (ՀՀ Շիրակի մարզ) գյուղերի բուսականությունից աղքատ տարածքները:



Vavilovia formosa (Stev.) Fed.
Վավիլովիա նրբագեղ - Դեկորատիվ բույս է: Շատ հազվագյուտ տեսակ է Հայաստանում: Ինտենսիվ արածեցման և զյուղատնտեսական զործունեության հետևանքով նրա երկու պոպուլյացիաներից մեկը վերջին տասնամյակներում այլևս չի գրանցվել:

Հանդիպում է Կովկասում, Փոքր Ասիայում, Իրանում, իսկ Հայաստանում՝ Գեղամա և Ձանգեզուրյան բուսաբանական շրջաններում:

Աճում է վերին ալպիական գոտու շերային շարժուն սողանքների վրա:

Բազմամյա բույս է, երկար սողացող կոճղարմատով և վառ վարդագույն ծաղիկներով: Բազմանում է սերմերով և վեգետատիվ ճանապարհով: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, բերքատվությունը՝ օգոստոս-սեպտեմբերին: Ամսամակեր է ունի մեծ հակաերզիոն նշանակություն. ամրացնում է սողանքների փխրուն շերտը: Ազատ խաչասերվում է մշակովի ոլոռի հետ: Ունի պրակտիկ նշանակություն:



Pyrus caucasica Fed. Հայաստանում հայտնի վայրի տանձենու բազմաթիվ տեսակներից է Տանձենի կովկասյանը: Տարածված է Հայաստանի անտառներում. Անտառահատումների հետևանքով պակասում են հատկապես վայրի տեսակները, որոնց բնափայտը որակյալ հումք է կահույքագործության համար: Բուլոր վայրի տանձենիներն ունեն սելեցիոն նշանակություն: Դրանք զնահատվում են որպես չորա- և ցրտադիմացկուն, միջավայրի պայմանների նկատմամբ ոչ պահանջկոտ բույս, կարող են օգտագործվել հիբրիդացման նպատակով և որպես պատվաստակալներ: Առաջացնելով փարթամ և փոված արմատային համակարգ՝ կարող են օգտագործվել անտառտնկումների համար: Տանձենի կով-

կասյանը ունի հողերի հակաերզիոն նշանակություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Կարմիր Գիրք. Բույսեր, Երևան, 1988:
2. *Takhtadzhian A. u dr.* Флора Армении, том 6, 1973.
3. *Takhtadzhian A.* Floristic areas of the world, California. USA. 1986.
4. IUCN Red List. Categories and Criteria. Version 3.1 Oxford. UK. 2001.
5. *Vavilov N.I.* Origin and Geography of Cultivated Plants. Cambridge. UK. 1992.

Послупила 22.11.2006

Биолог. журн. Армении, 3-4 (58), 2006

УДК 630.231

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Ժ.Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ Ռ.Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ Տ.Ժ. ՎԱՐԴԱՆՅԱՆ՝

ԴՀ ԳԱՍԲուսաբանության ինստիտուտ, 0063, Երևան
"Հայաստան" ՊՈԼԿ, 0047, Երևան

Քննարկվում են Հայաստանի անտառային պաշարների պահպանության արդյունավետության բարձրացման և կայուն օգտագործման կատարելագործման հարցերը: Նշվում է, որ հիմնախնդրի լուծումը պայմանավորված է անտառային համակարգի ինստրուկցիոնալ կառուցվածքի և ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործմամբ, ապօրինի անտառահատումների կանխարգելումն ապահովող մեխանիզմների մշակմամբ, ինչպես նաև անտառային սեկտորի կադրային կազմի բարելավմամբ:

Обсуждаются вопросы повышения эффективности охраны и совершенствования устойчивого использования лесных запасов Армении. Отмечается, что решение проблемы обусловлено усовершенствованием институциональной структуры и законодательства лесного сектора, а также разработкой механизмов, связанных с обеспечением запрета незаконных вырубок, улучшением кадрового состава в лесной сфере.

The efficiency of conservation and sustainable use of forest resources of Armenia are discussed. It is emphasised, that the solution of this problem is conditioned with improvement of an institutional structure and legislation of the forest sector with development of illegal cuttings control, and staff improvement in the forestry area.

*Անտառային պաշար - անտառօգտագործում - կենսաբազմազանություն -
անտառների - մոնիտորինգ*

Հայաստանի անտառային պաշարների պահպանության և կայուն օգտագործման ոլորտի ներկայիս հիմնախնդիրների մեծ մասը առնչվում է անտառային սեկտորի ինստիտուցիոնալ կառավարման համակարգում առկա հակասությունների, գերատեսչական ենթակայության տարբեր կառույցների ու գործառույթների ոչ հստակության, օրենսդրության անկատարության, ինչպես նաև անտառային տնտեսության կադրային անբավարար ապահովվածության, մարդկային ռեսուրսների մասնագիտական ցածր որակավորման և բնակչության սոցիալ - տնտեսական անբավարար պայմանների հետ: Նկատի ունենալով այդ հանգամանքը, սույն աշխատանքում փորձ է արվում ուրվագծել հիմնախնդիրների լուծման հնարավորություններն ու առաջարկել մեխանիզմներ, որոնք կնպաստեն երկրի անտառային պաշարների պահպանության, վերարտադրության և կայուն օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

Անտառային ռեսուրսների կայուն կառավարումն ամենից առաջ

պայմանավորված է

- Համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքի կատարելագործմամբ և զերատեսչական ենթակայության հստակեցմամբ;

- Անտառային սեկտորի նպատակաուղղված զարգացումն ու ճիշտ ռազմավարությունն ապահովող անտառային քաղաքականությանը և անտառի ազգային ծրագրին վերաբերող փաստաթղթերի առկայությամբ;

- Անտառային օրենսդրության կատարելագործմամբ, որն իր մեջ կներառի օրենքի կիրարկումը և նրա արդյունավետությունը բարձրացնող տասնյակ ենթաօրենսդրական փաստաթղթերի պատրաստում և զործողության մեջ ներդրում;

- Անտառային ռեսուրսների և կենսաբազմազանության պահպանությունը, կայուն օգտագործումն ու վերարտադրությունը ապահովող ռազմավարությամբ;

- Ապօրինի անտառահատումների կանխարգելումն ապահովող մեխանիզմների ու արդյունավետ միջոցների մշակմամբ;

- Անտառային տնտեսության համակարգի կադրային կազմի բարելավմամբ, ինչպես նաև մասնագետների որակավորման բարձրացմամբ:

1. Անտառային ոլորտի ինստիտուցիոնալ կառուցվածքի կատարելագործում և կառուցվածքային բարեփոխումներ

Հայաստանի անտառային ոլորտի կառավարման համակարգը, ինչպես ԽՍՀՄ-ի ժամանակահատվածում, այնպես էլ հետխորհրդային տարիներին կրել է կառուցվածքային փոփոխություններ, որոնք կատարվել են հատկապես վերջին 1.5 տասնամյակի ընթացքում:

Վերջին փոփոխությունը կատարվել է ՀՀ կառավարության 2004 թ. հունվարի 15-ի թ 7-ն որոշմամբ, համաձայն որի պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում լիազորված պետական կառավարման մարմին է հանդիսանում ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունը, որն այդ լիազորություններն իրականացնում է «Հայանտառ» Պետական ոչ առևտրային կազմակերպության և նրա ենթակայությամբ գործող անտառտնտեսությունների միջոցով: Սրա ժամանակ, ՀՀ կառավարությունը այդ որոշմամբ Բնապահպանության նախարարությանն է վերապահել անտառների պետական բնապահպանական վերահսկողության լիազորությունը, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներում գտնվող անտառային տարածքների կառավարումը:

1992-2003 թթ. ընթացքում «Հայանտառ»-ի համակարգի մի շարք ստորաբաժանումներ (անտառմշիկորատիվ, անտառսերմնային, անտառապաշտպանական և անտառգիտափորձարարական կայաններ) լուծարվել են բյուջետային համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Սակայն նշված ստորաբաժանումներն իրականացնում էին չափազանց կարևոր գործառույթներ անտառապատման, անտառվերականգնման և անտառապաշտպանական ուղղվածություններով: Ֆինանսական միջոցների և համապատասխան որակավորման մասնագետների բացակայության պատճառով ներկայումս չեն գործում նաև կենտրոնացված անտառապաշտպանական ծառայությունները, անտառների պետական հաշվառման և անտառային պետական կադաստրի վարման համակարգերը, անտառային գիտասփյուռ ծառայությունը և այլ կառույցներ:

Լերկայումս, երբ առկա են անտառի ազգային քաղաքականությունը և անտառի ազգային Օրագիրը [2, 3], ընդունված է անտառային նոր օրենսգիրքը և անհրաժեշտություն է առաջացել անցումը շուկայական տնտեսության, անհնար է անտառային ոլորտի կառավարումը շարունակել հին ծներով ու մեթոդներով, առանց համակարգային լուրջ բարեփոխումների:

Համակարգի կառուցվածքային բարեփոխումներն իրականացնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ կարճաժամկետ միջոցառումները.

- Առաջնահերթ և կարևոր միջոցառումը, անտառկառավարման պետական մարմինների կառուցվածքային բարեփոխումներն են, որի արդյունքում կբարձրանա անտառային համակարգի կառավարման տնտեսական և բնապահպանական արդյունավետությունը, կհստակեցվի լիազորված մարմինների գործառույթները, կիրականացվի կայուն անտառկառավարում: Միջոցառումների մի մասն էլ կապված է համապատասխան ծառայությունների և ստորաբաժանումների ստեղծման հետ:

Դրանք են.

- Անտառների պահպանության ծառայություն, որը կապահովի անտառների արդյունավետ պահպանությունը, ապօրինի գործողությունների նվազումը:

- Անտառային տնտեսության կառավարման պլանավորման կամ, ինչպես ընդունված էր նախկինում, անտառշինական նախագծերի իրականացման ստորաբաժանում, որը կապահովի անտառկառավարման պլանների (անտառշինական նախագծերի) առկայությունը և կայուն անտառկառավարումը:

- Անտառաշտպանական կայան, որը կիրականացնի անտառի վնասատուների և հիվանդությունների ուսումնասիրություն, մոնիտորինգ և կանխարգելում, կապահովի կենսունակ անտառների առկայությունը:

- Անտառսերմնային լաբորատորիա, որի գործունեության արդյունքում կապահովվի ստուգված ու որակյալ սերմնամայրիքի առկայությունը, որակյալ տնկանյութի ստացումը, հետևաբար, և անտառվերականգնման ու անտառապատման աշխատանքների արդյունավետության բարձրացումը:

- Անտառմելիորատիվ կայան կիրականացնի անտառապատ տարածքների ընդարձակում, հակաէրոզիոն անտառմելիորատիվ տնկարկների ստեղծում:

- «Անտառզիտասփյուռ» ծառայություն, որը կիրականացնի անտառային ոլորտի շահագրգիռ կողմերի իրազեկության բարձրացումը և մարդկային ռեսուրսների զարգացումը:

- Անտառների հաշվառման, մոնիտորինգի և կադաստրի վարման համակարգ: Այս կառույցը կիրականացնի կայուն անտառկառավարման արդյունավետ պլանավորումը, անտառային կենսաբազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը, վերլուծությունը և տրամադրումը:

2. Անտառային օրենսդրության կատարելագործումը

ՀՀ անտառային նախորդ Օրենսգիրքը, որն ընդունվել էր 1994 թ., իր մեջ պարունակում էր բոլոր այն բացթողումներն ու առանձին դրույթների միջև առկա հակասությունները, որոնք ըստ էության պայմանավորված էին խորհրդային շրջանից ժառանգած Անտառային օրենսգրքով (1978), որն իրականում հանդիսանում էր պետական անտառային ֆոնդի հողերի կառավարման

օրենսգիրք և որում արտացոլված չէին այնպիսի դրույթներ, ինչպիսիք են սոցիալ-տնտեսական հարաբերությունները, անցումը դեպի շուկայական տնտեսության, հողի սեփականության տարբեր ձևերը, ինչպես նաև ապահովված չէր ոլորտի կառավարման մարմինների գործառույթների հստակ տարանջատումը, հասարակայնության մասնակցությունը բնագավառում որոշումների կայացմանը, լիարժեք չէր բավարարում Հայաստանի կողմից վավերացված միջազգային կոնվենցիաների և համաձայնագրերի պահանջները, հակասում էր անտառային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերին [4] :

2005թ. նոյեմբերին գործողության մեջ դրված օրենսգրքում արտացոլված և օրենսդրական այլ և միջազգային փաստաթղթերի հետ ունեցած հակասությունների և առանձին դրույթների առնչությամբ առկա ամհամապատասխանությունների լուծումը: Սակայն օրենսգրքի արդյունավետ կիրարկումը պայմանավորված է առաջին հերթին համակարգին առնչվող և անտառային հարաբերությունները կարգավորող այլ օրենքների ու իրավական ակտերի համապատասխանեցմամբ, ինչպես նաև Անտառային օրենսգրքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակմամբ և ընդունմամբ [4] :

Ներկայումս ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ազգային անտառային ծրագրի հիմնադրամի և Հայաստանի անտառային սեկտորի, ի դեմս «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև իրականացվում է համագործակցություն, որի նպատակն է խթանել ազգային անտառային ծրագրի հետագա զարգացումը և որի հիմքում դրված է ՀՀ նոր Անտառային օրենսգրքի և Անտառի Ազգային Ծրագրի (ԱԱԾ) պահանջներից բխող մի շարք անտառային կանոնակարգերի մշակում և ընդունում. որոնք և արդեն ներառված են ՀՀ Կառավարության և Գյուղատնտեսության նախարարության գործողությունների ժամանակացույցում: Դրանք են.

- Պետական անտառներում անտառօգտագործման վճարների դրույթաչափերի կարգը սահմանելու մասին:

- Պաշտպանական և արտադրական նշանակության անտառներում անտառօգտագործման և պահպանության կարգը սահմանելու մասին:

- Անտառների ըստ նպատակային (ֆունկցիոնալ) նշանակության դասակարգման մասին:

- Բնափայտի մթերման կարգը պետական և համայնքային անտառներում:

- Կողմնակի անտառօգտագործման և երկրորդական անտառանյութի մթերման կարգը պետական և համայնքային անտառներում:

- Անտառապատման և անտառվերականգնման իրահանգներ:

- Անտառտնկարկները անտառի շաբլոն փոխադրելու կարգը:

- Անտառային պետական կադաստրի վարման և անտառների պետական հաշվառման ու տվյալների տրամադրման կարգը և այլն:

Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում անտառային օրենսդրության կատարելագործումը ներառում է 2005թ. ընդունված Անտառային նոր օրենսգրքից և Անտառի Ազգային Ծրագրից բխող նշված և մի շարք այլ իրավական փաստաթղթերի ստեղծումն ու ընդունումը, որը կապահովի.

- անտառների կայուն կառավարումը հիմնված երկարաժամկետ և հստակ սկզբունքների վրա:

- անտառային ոլորտին առնչվող տարբեր իրավական ակտերի միջև առկա

հակասությունների և կրկնությունների վերացում;

- ՀՀ Անտառային օրենսդրության համապատասխանեցումը Բնապահպանական ոլորտին առնչվող միջազգային իրավական նորմերին, կոնվենցիաներին ու միջպետական համաձայնագրերին;

- Մարզերում կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքների) գործառույթների հստակեցում անտառակառավարման և վերահսկման ոլորտներում;

- Սեփականության տարբեր ձևերի անտառների կարգավիճակի կանոնակարգում և կառավարում;

- Անտառային ֆոնդի միասնականության ապահովման իրավական հիմքերի ամրապնդում;

- Անտառային արտադրանքի բոլոր տեսակների համար իրավական հիմքի ստեղծում մրցակցային շուկայի զարգացման նպատակով;

- Անտառային տնտեսությունում միջազգային ներդրումներին աջակցող իրավական հիմքի ստեղծում;

- Անտառվերականգնման և անտառապատման միջոցառումներում ոչ մասնավոր սեկտորի ու քաղաքացիների ներգրավման, ինչպես նաև որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության մեխանիզմների ապահովում;

- Անտառակառավարման սահմանված նորմերի ու կանոնների իրականացման հսկողության և վերահսկողության մեխանիզմների ապահովում:

3. Անտառային ռեսուրսների կայուն օգտագործման և կենսաբազմազանության պահպանության կատարելագործումը

Կայուն անտառակառավարման համար, որտեղ շեշտը դրվում է էկոհամակարգերի ֆունկցիոնալ գործունեության, կենսաբազմազանության պահպանության վրա զնահատման խնդիրը դառնում է չափազանց կարևոր: Որպես կանոն, այն իրականացվում է կենսաբանական գույքագրման միջոցով, որում առաջին հերթին հաշվի է առնվում տեսակների տարածվածությունը:

Ելնելով անտառային կենսաբազմազանության ներկա վիճակի զնահատումից և նրա պահպանության, պաշարների կայուն օգտագործման նպատակից ու խնդիրներից անտառային ոլորտի համար կարևորվում են հետևյալ առաջնահերթ ռազմավարական գործողությունները.

- Անտառային կենսաբազմազանության (ԱԿԲ) մոնիտորինգը համար հիմնական ինդիկատորների սահմանում և անտառի մոնիտորինգի ու տեղեկատվության փոխանակման անխափան գործող համակարգի ստեղծում: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել տեսակների և դրանց պոպուլյացիաների, ինչպես նաև էկոհամակարգերի քանակական ու որակական զնահատում, որը կնեոարի նաև տեղեկատվության հավաքագրում, պահպանում (թանկի ստեղծում) և փոխանակում: Առաջարկվում է նաև ԱԿԲ իազվագյուտ ու վտանգված տեսակների պահպանության համար էտալոնային էկոհամակարգերի քաղաքացիական ու քարտեզագրում և պահպանության ապահովում: Նշված գործողությունների իրականացման արդյունքում ակնկալվում է ԱԿԲ վերաբերյալ տվյալների հավաքագրում, զնահատում, մոնիտորինգի և տեղեկատվության փոխանակության համակարգի հիմնման համար նախադրյալների ստեղծում, ինչպես նաև ԱԿԲ ներկա վիճակի ճշգրիտ զնահատում, կրիտիկական վիճակում

գտնվող տեսակների բացահայտում և մոնիտորինգի համար տվյալները ապահովում: Արդյունքում հնարավոր կլինի ապահովել և ավելի հուսալի դարձնել առավել արժեքավոր անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանությունն արդյունավետ պահպանությունը: Նկատի ունենալով, որ Հայաստանի անտառային կենսաբազմազանությունը, մասնավորապես, դեմոդոբազմազանությունը բնութագրվում է չափազանց հարուստ տեսակային կազմով նպատակահարմար է մոնիտորինգն իրականացնելիս մշակել համապատասխան չափորոշիչների համակարգ, որի հիմքում պետք է ընկած լինեն որոշակի սկզբունքներ [7]:

Ներկայումս բնական պաշարների կառավարման չքավորեցման նվազեցման ծրագրի (ԲՊԿԶՆՑ) շրջանակներում իրականացվում է միջազգային պահանջներին բավարարող անտառկառավարման պլանավորման գործընթաց, որն իր մեջ ներառում է գործող անտառտնտեսությունների համար անտառկառավարման պլանների մշակումը և իրականացումը: Անտառկառավարման ճիշտ և կշռադատված պլանավորումը առաջին հերթին նպատակ է հետապնդում ապահովել ԱԿԲ պահպանության պահանջների հավասարակշռությունը տեղական բնակչության կենսամակարդակի բարելավմանն ուղղված օժանդակության հետ: Անտառկառավարման ճիշտ պլանավորումը կնպաստի նաև անտառտնտեսությունների տարածքում գլոբալ և ազգային կարևորության ԱԿԲ կորուստի կանխարգելմանը, անտառտնտեսվարման բարելավմանը, անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա տնտեսական և ռեկրեացիոն գործունեության ազդեցության բացահայտմանը, ինչպես նաև անտառների գույքագրման և հաշվառման աշխատանքներ իրականացմանը:

Անտառային լանդշաֆտային և հարուստ կենսաբազմազանության ու բնական էկոհամակարգերի վրա անտրոպոգեն ակտիվ ճնշում ունեցող այնպիսի երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, առկա պահպանվող տարածքների քանակությունը կարելի է համարել անբավարար հաշվի առնելով, որ այդ համակարգի ստեղծման հիմքում դրված չեն լանդշաֆտների ձևավորմանն ու զարգացման երկրաաշխարհագրական մի շարք հիմնարար օրինաչափություններ, ինչպիսիք են տարածքների բարձունքա-գոտիական բաշխվածությունը և փոխկապակցվածությունը, էկոհամակարգերի կառուցվածքային առանձնահատկությունները և այլն: Ներկայիս պահպանվող տարածքները գերակշիռ մասը անտառային էկոհամակարգեր են: Առանձնապես դա վերաբերում է արգելավայրերին, որոնցում կենսաբազմազանության պահպանության վիճակն առավել քան մտահոգիչ է [5]: Դրանց ճնշող մեծամասնությունը այդ կարգավիճակն ստացել է դեռևս 1958 թ. (Ախնաբատի կեչու պուրակ, սոսու պուրակ, արջատխլենու ծառուտ, մրտավարդենու պուրակ, Գյուլազարակ) սոճուտ, Հերիերի գիհու ճոսրանտառ և այլն):

Ներկայումս մշակված է բնության հատուկ պաշարների տարածքների (ԲՀՊՏ) համակարգի զարգացման պետական ռազմավարություն, որում մատնանշված մոտեցումները և սկզբունքները պետք է նպատակաուղղվեն այդ ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը՝ աջակցություն անտառային ղեգրադացված տարածքների, վտանգված տեսակների, բնակչության և էկոհամակարգերի վերականգնմանը:

Վերջին հարյուրամյակի ընթացքում մի քանի անգամ կատարված անտառների չհամակարգված ու անմախաղեպ օգտագործման արդյունքում տեղի ունեցած կառուց-վածքային խորը փոփոխությունների պատճառով ծառուտների զգալի մասը կորցրել է բնական վերականգնման ունակությունը, ակտիվացել են երոզիոն երևույթները, խախտվել է անտառի հիդրոլոգիական ռեժիմը: Նշված համգամանքները էլ ավելի են կարևորում անտառային դեգրադացված տարածքների, վտանգված ծառատեսակների, բնակմիջավայրերի և էկոհամակարգերի վերականգնումը:

4. Ապօրինի անտառհատումների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ և գործողություններ

Ապօրինի անտառհատումները հատկապես վերջին երկու տասնամյակների ընթացքում դարձել են անտառային ոլորտի զարգացմանը խոչընդոտող ամենագլխավոր պատճառը, որն ինչպես հայտնի է, պայմանավորված է աղքատության բարձր մակարդակով և կոմերցիոն նպատակներով: Ըստ կատարված հաշվարկների, ապօրինի հատումների վերջին տարիների մասշտաբները ավելի քան 10 անգամ գերազանցել են հատումների օրինական ծավալները:

Հաշվի առնելով այդ համգամանքը ՀՀ Կառավարությունը իր 2004 թ. սեպտեմբերի 30-ի թիվ 38 արձանագրային որոշմամբ հաստատել է ապօրինի հատումների նվազեցման գործողությունների Օրագիրը [1], որն ընդգրկում է առաջիկա 6 տարվա ժամանակահատված: Գործողությունների այդ ծրագրով նախատեսվում են հետևյալ բաղադրիչները.

Հասարակության իրազեկության բարձրացում, գյուղական չքավորության նվազեցում: համայնքային անտառային Օրագրեր, այլընտրանքային վառելիքի մատակարարում: օրինական փայտե արտադրանքի մատակարարման ավելացում, անտառային հաստատությունների վերականգնում և հզորությունների ստեղծում, մոնիտորինգի և վերահսկողության համակարգերի հզորությունների ամրապնդում, անտառի վկայագրում:

Նշված գործողությունների իրականացմամբ, անշուշտ, ապօրինի հատումներն անբոլջությամբ չեն վերանա, սակայն ճիշտ ներդրումների և Օրագրերի արդյունավետ իրականացման դեպքում հնարավոր է հասնել զգալի նվազեցման:

Ապօրինի հատումների դեմ պայքարի գործում, բացի թվարկված ռազմավարական ուղղություններից, կարևոր է նաև անտառային օրենսդրության կատարելագործումը, որը մի կողմից կկանխի հնարավոր ապօրինի անտառհատումները, մյուս կողմից կնպաստի դրանց հայտնաբերմանը և համապատասխան միջոցների կիրառմանը:

5. Անտառային ոլորտի կադրային կազմի բարելավումը

Հայաստանում անտառային ոլորտի մասնագետների անբավարար քանակության և ընդհանուր առմամբ դրանց ցածր որակավորման հիմնախնդիրը պայմանավորված է այն հանգամանքով, որ տասնամյակներ շարունակ Հայաստանում անտառային ոլորտի զարգացումը և անտառագետ մասնագետների պատրաստումը չի կարևորվել այն պարզունակ տրամաբանությամբ ու

հիմնավորմամբ, որ մեր հանրապետությունը սակավամտառ է և գոյություն ունեցող ցածրարդյունավետ անտառներն էլ նաև են դեր չեն կատարում տնտեսության էկոնոմիկայում: Նման մտայնությունը շարունակում էր պահպանվել մինչև 1990-ական թվականները:

Հետագայում (1993-95 թթ) էներգետիկ ճգնաժամի տարիներին կատարված աննախադեպ և չկանոնակարգված ծառահատումների հետևանքները մի կողմից և մի շարք բնապահպանական կոնվենցիաներին Հայաստանի անդամակցելն ու որոշակի պարտավորությունների ստանձնելը մյուս կողմից, անհրաժեշտություն առաջ բերեցին այդ ոլորտի ըստ ամենայնի զարգացմանը:

Հանրապետության անտառային տնտեսությունում բարձրագույն կրթությամբ անտառագետների խիստ անբավարար քանակությունը երկար ժամանակ պայմանավորված է եղել Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում անտառագետի մասնագիտության անտեսմամբ:

Եվ հենց այդ համգամանքն էլ հանդիսացել է ոլորտի արդյունավետ գործունեությունը խոչընդոտող կարևոր հիմնախնդիրներից մեկը:

1990- ական թվականներին Հայկական Գյուղատնտեսական ակադեմիայի (ներկայիս ՀԴԱՀ) նախաձեռնությամբ բացվեց անտառային տնտեսության և կանաչապատման ոլորտների համար անտառագետ մասնագետների պատրաստումը, իսկ հետագայում սկսած 2002 թ.-ից շվեդական միջազգային SIDA կազմակերպության ֆինանսական աջակցությամբ սկսվեց երկկողմանի համագործակցություն Շվեդիայի գյուղատնտեսական գիտությունների համալսարանի անտառաբուրակառարագիտական դպրոցի և Հայաստանի պետական ագրարային համալսարանի անտառագիտության ամբիոնի միջև: Հայաստանում անտառային կրթության զարգացման վերաբերյալ: Ներկայումս ՀԴԱՀ-ի անտառագիտության ամբիոնը ակտիվ գործունեություն է իրականացնում առաջիկա տարիներին անտառային ոլորտին և կանաչապատման կազմակերպություններին բարձրորակ մասնագետներով ապահովելու համար [6, 8]։ Սյուս կողմից, անտառային սեկտորում անհրաժեշտություն կա մարդկային ռեսուրսների զարգացման և որակավորման բարձրացման: Անտառային ոլորտի յուրաքանչյուր 5 տարին մեկ անցնում էին մասնագիտական տեսնիկական վերապատրաստման ուսուցում: Վերջին տարիներին այդ ավանդույթը դադարել է զործել: Ոլորտի աշխատակիցների և մասնագետների վերապատրաստման ու որակավորման բարձրացման նպատակով կազմակերպվող ուսուցումն անտառային սեկտորի գործունեության այն բաղադրիչն է, որն ապահովում է անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ անտառային քաղաքականության և արակտիկայի բարելավման, ինչպես նաև կայուն անտառակառավարման համար:

Անտառային ոլորտում ուսուցման գործի բարելավմանն ուղղված միջոցառումները պետք է ընդգրկեն հետևյալ բաղադրիչները.

- անտառային սեկտորում մարդկային ռեսուրսների վերապատրաստում;
- տարբեր որակավորման և կարգավիճակի անձնակազմի համար ուսուցման համապատասխան ծրագրերի մշակում;

- նկատի ունենալով, որ ուսուցման գործընթացներին մասնակցողների ճնշող մեծամասնությունը չունի բազային անտառագիտական կրթություն, անհրաժեշտ է կազմակերպել արդիական ու կարևոր հիմնահարցերին նվիրված հատուկ

ուսուցողական ամենամյա դասընթացներ:

Այդ նպատակով ԲԿՉՆՕ-ի շրջանակներում կազմակերպվել է «Ձիկատար»-ի անտառագիտական ուսուցման տարածաշրջանային կենտրոն:

Այսպիսով, ընդհանրացնելով երկրի անտառային պաշարների պահպանության արդյունավետության բարձրացումն ու կառավարման կատարելագործումը պայմանավորող մեխանիզմների ըննարկումը, կարելի է եզրակացնել, որ վերջին 3-4 տարիներին զգալի աշխատանք է կատարվել անտառային ոլորտի ինստիտուցիոնալ կառուցվածքի բարեփոխման, օրենսդրության կատարելագործման և ապօրինի ծառահատումների կրճատման ու կանխարգելման ուղղությամբ: Չնայած դրան անհրաժեշտ է հնարավորինս կարճ ժամկետում / առաջիկա 1-2 տարիներին/ մշակել և ընդունել անտառային օրենսդրությունից բխող առաջնահերթ ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև զարգացնել և արդյունավետ դարձնել անտառների հաշվառման և կադաստրի վարման համակարգը:

Չափազանց կարևոր է անտառշինական նախագծերի և անտառկառավարման պլանների մշակման աշխատանքների ավարտումը մինչև 2010 թ.:

Հայաստանի օպտիմալ անտառապատվածությունը հնարավորինս կարճ ժամկետում պպահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել ՀՀ անտառի ազգային Օրագրով նախատեսվող տարեկան 5 հազ. հա անտառվերականգնման տնկումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ապօրինի անտառահատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների Օրագիր. Երևան, 61 էջ, 2005:
2. Հայաստանի Հանրապետության անտառի ազգային Օրագիր. Երևան, 84 էջ, 2005:
3. Հայաստանի Հանրապետության անտառի ազգային քաղաքականություն և ուղղավարություն. Երևան, 83 էջ, 2005:
4. Վարդանյան Տ.Ժ. Հայաստանի անտառային օրենսդրությունը, «Գիտություն և տեխնիկա», 3, 2-5, 2006, 4, 6-10, 2006:
5. Варданян Ж.А. Сб. Междун.конф. "Ботанические сады как центры сохранения биоразнообразия и рационального использования растительных ресурсов", 74-76, М., 2005.
6. Варданян Ж.А., Саядян О.Я. Изв. АрмСХА. 3, 7-8, 2005.
7. Варданян Т.Ж. Мат-лы I Междунар. конф. молодых ботаников, СИБ. с.111, 2006.
8. Тарвердян А.П., Варданян Ж.А., Саядян О.Я. и др. Изв. Арм СХА. 3, 58-60, 2003.

Поступила 04.X.2006

Биолог. журн. Армения, 3-4 (58), 2006

УДК 631.171

ՑԱԾՐ ՀԱՃԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՈՒՏ ՀՈՂԻ ԱՐԱԶԵՐԾՍԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄՐԱԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Ա.Վ. ՍԱՀԱԿՅԱՆ, Ս.Դ. ԵՐԻՑՅԱՆ

Հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն. 375082, Երևան

Լաբորատոր պայմաններում ուսումնասիրվել է ցածր հաճախականության մեխանիկական տատանումների ազդեցությունը աղակալված հողի աղազեծման գործընթացի արագացման, ինչպես նաև վերջինիս ֆիզիկական հատկությունների վրա: Ցույց է տրված, որ մինչև 5-6 րոպե տևողությամբ մեխանիկական տատանումների կիրառումը թույլ է տալիս աղազեծման գործընթացը արագացնել 1.5-2.0 անգամ: Տատանումների գործընթացում չնայած զգալի կրճատվում է հողի ֆիլտրացիայի արագությունը, այնուամենայնիվ, մելիորացիայից հետո հողն ունի բավարար ֆիլտրացիայի արագություն

В лабораторных условиях изучено влияние низкочастотных механических колебаний на ускорение процесса расоления засоленных почв, а также последнего на физические свойства почвы. Показано, что применение механических колебаний продолжительностью 5-6 мин позволяет ускорить процесс расоления в 1,5-2,0 раза. В процессе промывки, хотя значительно сокращается скорость фильтрации почвы, ее величина остается в пределах условий, оптимальных для почв

In laboratory conditions the influence of low-frequency mechanical oscillations on the acceleration of desalination process and also their influence on the physical properties of salt affected soils are investigated. It is shown that the application of mechanical oscillations with duration of 5-6 minutes, allow to accelerate the desalination of process up to 1.5-2.0 times. In the process of leaching the filtration rate of soils is considerably reduced, however its rate remains within the limits of optimum range of soil conditions.

Հող - աղակալում - լվացում - արագացում - մեխանիկական տատանումներ

Գյուղատնտեսական մթերքների արտադրության բարձրացման նպատակով նոր ոռոգելի հողատարածությունների ընդարձակումը ուղեկցվում է հողերի աղակալման, ալկալիացման երևույթներով: Այս բացասական գործընթացների արդյունքում աշխարհի ավելի քան 100 երկրներ ներկայումս ունեն հողերի աղակալման և ալկալիացման հիմնախնդիրներ: Ներկայումս աղակալված հողերի ընդհանուր տարածքը աշխարհում կազմում է 360 մլն. հա, որտեղ կրճատվել է հողերի արտադրողականությունը, ինչն իր բացասական կնիքն է դրել այդ տարածաշրջաններում բնակվող ազգաբնակչության սոցիալ - տնտեսական պայմանների վրա [4]:

Ելնելով վերոհիշյալից խնդիր ենք դրել մշակել հողերի աղազեծման արագացման նոր մեթոդներ, որոնք հնարավորություն կտան զգալիորեն կրճատել լվացման ջրի նորմաները և միաժամանակ լվացման տևողությունը: Աղազեծման

գործընթացի արագացման համար մեր կողմից կիրառվել է նոր մեթոդ հենված մասնիկի շուրջը հեղուկի շրջահոսքի արագացման վրա [3], որը իրականացվում է հողին ցածր հաճախականության մեխանիկական տատանումներ հաղորդման ճանապարհով [1, 3]: Այս աշխատանքներում որպես մեխորանտ օգտագործվել է ծծմբական թթուն, որի քիմիական ազդեցության արդյունքում ձևավորվում են համեմատաբար դժվար լուծելի սուլֆատային աղեր, ինչպիսիք են՝ գիպսը և մասամբ մագնեզիումի սուլֆատը: Ներկայումս ծծմբական թթվի բացակայության պայմաններում հանրապետությունում խնդիր է դրված որպես քիմիական մեխորանտ օգտագործել աղաթթու: Որի կիրառման դեպքում ձևավորվում են առավել հեշտ լուծելի աղեր, ինչպիսիք են կալցիումի և մագնեզիումի բլորիդները: Ելնելով վերոհիշյալից՝ անհրաժեշտություն է առաջացել ճշտել մեխանիկական տատանումների կիրառման մի շարք պարամետրեր: Այդ նպատակով առաջին փորձը կատարվել է լաբորատոր պայմաններում և որպես օբյեկտ ընտրված է բլորիդա-սուլֆատային աղակալում ունեցող աղուտ հող:

Լյուր և մեթոդ: Փորձերը կատարվել են Գողազիտության, ագրոքիմիայի և մեխորագիայի գիտական կենտրոնի լաբորատորիայում և ընդգրկվել են հետևյալ հետազոտությունները:

1. Սղուտ հողի լվացում սովորական եղանակով:

2. Սղուտ հողի լվացում ցածր հաճախականության մեխանիկական տատանումների (ՑՏ) կիրառմամբ:

Փորձի համար օգտագործվել են հողասյուներ յուրաքանչյուրը 48 սմ՝ ընդլայնական կտրվածքի մակերեսով և 15 սմ բարձրությամբ: Այս հողերի քիմիական կազմի անալիզները բերված են աղ. 1-ում:

Աղյուսակ 1. Փորձարկվող հողի քիմիական կազմը, մգ.էկվ. / 100 գ հողում

Ընդունուր աղեր, %	pH	Իոններ						
		CO ₃	HCO ₃	Cl	SO ₄	Ca	Mg	Na+K
5.872	7.86	0	0.81	71.50	28.69	18.66	17.83	58.50

Ցածր հաճախականության մեխանիկական տատանումների կիրառմամբ աղազերծման արագացումը զնահատելու համար օգտագործել ենք երեք պարամետրեր. (k₁), (k₂) և (k₃/k₂), որտեղ (k₁) և (k₂) աղազերծման արագացումը բնութագրող գործակիցներն են համապատասխանաբար ՑՏ-ի կիրառման դեպքում և առանց դրանց: Գողազիտը մեխանիկական տատանումներ հաղորդելու համար օգտագործվել է փոքր հզորությամբ լաբորատոր վիբրատոր, որը ուղղահայաց ուղղությամբ հողին հաղորդել է 30-50 Գ հաճախականությամբ և 5-6 մմ ամպլիտուդայով մեխանիկական տատանումներ:

Արդյունքներ և քննարկում: Փորձնական արդյունքների ամփոփումը ցույց է տվել, որ լվացման գործընթացի բնույթը ցածր հաճախականության մեխանիկական տատանումների ֆոնում զգալիորեն տարբերվում է սովորական եղանակով լվացման գործընթացից: Այն դեպքում, երբ հողասյանը հաղորդվում է ցածր հաճախականության մեխանիկական տատանումներ, լվացման սկզբնական փուլում արձանագրվում է հողային լուծույթի կոնցենտրացիայի կտրուկ աճ, որն այնուհետև ինտենսիվ նվազում է հետագա լվացման գործընթացների ընթացքում: Աղ. 2-ում բերված են ցածր հաճախականության մեխանիկական տատանումների կիրառմամբ հողի աղազերծման պարամետրերի հարաբերության (k₃/k₂) փոխախմածությունը հողային լուծույթի կոնցենտրացիայից և ֆիլտրացիայի արագությունից: Անալիզի ենթարկելով բերված տվյալները գալիս ենք այն եզրակացության, որ աղազերծման գործընթացի արագացումը, երբ լվացման ընթացքում կիրառվում է ՑՏ, զգալիորեն ավելի բարձր է, քան նրանց

բացակայության պայմաններում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ հողային լուծույթի ցածր կոնցենտրացիաների միջակայքում (0-30 գ/լ) աղազերծման գործընթացի արագությունը համեմատաբար ցածր է: Աղակալված հողերի լվացման ժամանակ աղազերծման գործընթացը, ցածր հաճախականության մեխանիկական տատանումների ազդեցությամբ, կախված է հողային լուծույթի կոնցենտրացիայից և նրա ֆիլտրացիայի արագությունից: Լվացման գործընթացի արագացումը ՑՀՏ-ի կիրառմամբ տատանվում է լայն սահմաններում (1,1-3,0 անգամ): Առավելագույն աղազերծման արագացումը (1,5-3,0 անգամ) համապատասխանաբար դիտվում է հողային լուծույթի 50-100 գ/լ կոնցենտրացիաների և 0,48-1,17 մ/օր ֆիլտրացիայի արագությունների միջակայքում: Փորձնական արդյունքները ցույց են տալիս, որ աղազերծման արագացումը հատկապես ցածր է, երբ հողային լուծույթի կոնցենտրացիաները փոքր են 30 գ/լ-ից, որը բացատրվում է հողային լուծույթի այս միջակայքում սովորական եղանակով լվացման ժամանակ հողի աղազերծման բարձր արագությամբ: Այս փաստը հուշում է, որ անհրաժեշտ է հողային լուծույթի ցածր կոնցենտրացիաների միջակայքում մշակել լվացման նոր, առավել արդյունավետ մեթոդներ: Այնուամենայնիվ, ինչպես ցույց են տալիս փորձնական արդյունքները, մեխանիկական տատանումների կիրառումը լվացման ամբողջ գործընթացի ընթացքում հնարավորություն է տալիս 1,5-2 անգամ կրճատել լվացման ջրի ծավալը և լվացման տևողությունը:

Աղյուսակ 2. Գածր հաճախականության մեխանիկական տատանումների կիրառմամբ հողի աղազերծման պարամետրերի հարաբերության փոխկախվածությունը հողային լուծույթի կոնցենտրացիայից և ֆիլտրացիայի արագությունից

Կոնցենտրացիան, գ/լ ֆիլտրացիայի արագությունը, մ/օր	Աղազերծման պարամետրերի հարաբերությունը, $K_{\text{ՀՏ}}$			
	0,48	0,53	0,7	1,17
30	1	1,1	1,2	1,18
50	1,5	1,75	1,6	1,5
75	2	2,5	2,6	1,75
100	1,5	3,0	2,6	2,4
125	1,3	2,5	1,9	1,7

Ուսումնասիրվել է ցածր հաճախականության մեխանիկական տատանումների կիրառման տևողության ազդեցությունը աղերի լվացման արագացման և ֆիզիկական հատկությունների վրա: Այս հետազոտությունները կարևոր են ինչպես տնտեսական, այնպես էլ հողի ֆիզիկական հատկությունների պահպանման տեսանկյունից: Հայտնի է, որ մեխանիկական տատանումների ֆոնում տեղի են ունենում որոշ բացասական ներգործություններ հողի ֆիզիկական հատկությունների վրա, որի արդյունքում մեծանում է հողի խտությունը, կրճատվում նրա ջրաթափանցելիությունը: Այս ազդեցությունները երկարացնում են լվացման գործընթացի տևողությունը: Միաժամանակ այն կարևոր է վառելանյութի խնայման տեսանկյունից: Օպտիմալ տատանումների ռեժիմի հայտնաբերման ուղղությամբ կատարված փորձնական հետազոտությունների

արդյունքները բերված են աղ. 3-ում: Հոդում ֆիլտրացիայի արագության դինամիկան ՑՀՏ-ի կիրառմամբ և առանց դրանց ունի հատուկ բնույթ, որը կայանում է նրանում, որ լվացման սկզբում շնորհիվ հողից աղերի լվացման և նրա կլանող կոմպլեքսից Na^+ իոնների դուրս մղման ֆիլտրացիայի արագությունը մեծանում է հասնելով իր առավելագույն արժեքին, իսկ այնուհետև նվազում հողի ֆիզիկական և քիմիական հատկությունների փոփոխման արդյունքում: Աղ. 3-ում բերված են տատանումների տևողության ազդեցությունը ֆիլտրացիայի արագության վրա:

Աղյուսակ 3. Աղակալված հողի լվացման ժամանակ ֆիլտրացիայի արագության հարաբերական մեծության (V_m/V_s) և աղազերծման հարաբերական արագացման (K_v/K_u) կախվածությունը տատանումների տևողությունից

Պարամետրեր	Տատանումների տևողությունը, վ					
	0	5	10	20	40	60
V_m/V_s	1.5	1.75	3	3.2	3.3	3.4
K_v/K_u	1.0	1.01	1.45	1.8	1.95	2

V_m -լվացման ընթացքում առավելագույն ֆիլտրացիայի արագությունն է, V_s -լվացման վերջում կայունացած ֆիլտրացիայի արագությունը:

Ատաղկաված արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ ֆիլտրացիայի հարաբերական արագությունը կախված է տատանումների տևողությունից: Տատանումների տևողության երկարացման հետ զուգընթաց ֆիլտրացիայի հարաբերական արագությունը աճում է և լվացման վերջում կազմում է 3.0-3.4, ինչը նշանակում է, որ ֆիլտրացիայի արագությունը կրճատվում է 3.0-3.2 անգամ: Անհրաժեշտ է նշել, որ լվացման ավարտին ֆիլտրացիայի արագությունը կրճատվում է 1.5 անգամ նաև այն դեպքում, երբ տատանումները բացակայում են: Չնայած այն հանգամանքին, որ ֆիլտրացիայի արագությունը զգալիորեն նվազում է, այնուամենայնիվ, լվացման ավարտին նրա մակարդակը զգալիորեն բարձր է և հասնում է 0.5-0.8 մ/օր, իսկ առանց մեխանիկական տատանումների ֆիլտրացիայի արագությունը լվացման ավարտին կազմում է 1.2 մ/օր: Օպտիմալ տատանումների ռեժիմի հաստատումը խիստ կարևոր է, որպեսզի իրականացվի առավելագույն լվացման արագություն մինիմալ էներգիազեղումների ծախսի պայմաններում: Աղ. 3-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ առավելագույն աղազերծման արդյունքի կարելի է հասնել յուրաքանչյուր լվացման ջրի 1 չափաբաժնի տրման ժամանակ, (որը քանակապես հավասար է հողասյան ամբողջ ծակուտկեն ծավալի 0.5 մասին) 1 ռոպե տևողությամբ տատանումների հաղորդման միջոցով: Նշենք, որ սուլֆատային աղակալման դեպքում (ծծմբական թթվի կիրառման դեպքում) տատանումների կիրառման օպտիմալ տևողությունը կազմում է 30 ռոպե [2]:

Այսպիսով քլորիդա-սուլֆատային բնույթի աղուտ հողերի լվացման գործընթացում առավելագույն աղազերծման արագություն ապահովելու համար ամբողջ լվացման ընթացքում անհրաժեշտ է հողին հաղորդել 5-6 ռոպե տևողությամբ մեխանիկական տատանումներ: Սիչդեռ սուլֆատային աղերի առկայության պայմաններում նույն արդյունքին հնարավոր է հասնել 2 ժ տևողությամբ տատանումների հաղորդման միջոցով [2]:

Ընդհանրացնելով ստացված արդյունքները կարելի է նշել:

Աղուտ հողի լվացման ավարտին, երբ այն ընթանում է մեխանիկական տատանումների կիրառմամբ, արձանագրվում է հողի ֆիլտրացիայի արագության նվազում 3-3.4 անգամ՝ նրա առավելագույն արագության համեմատությամբ, այնուամենայնիվ, լվացման ավարտին՝ նրա ցուցանիշը զգալիորեն բարձր է և հասնում է 0.5-0.8 մ/օր, իսկ առանց մեխանիկական տատանումների կիրառման հողի ֆիլտրացիայի արագությունը նվազում է նրա առավելագույն արագության համեմատությամբ 1.5 անգամ, իսկ ֆիլտրացիայի արագությունը լվացման ավարտին կազմում է 1.2 մ/օր:

Ուսումնասիրվել է մեխանիկական տատանումների տևողության ազդեցությունը քլորիդային բնույթի աղակալված հողերի լվացման արագացման գործընթացում: Ցույց է տրված, որ յուրաքանչյուր չափաբաժին լվացման ջրի տրման ընթացքում տատանումների տևողությունը կազմում է 1 ռոպե, մինչդեռ սուլֆատային աղակալման պայմաններում այդ ցուցանիշը կազմում է 30 ռոպե:

Լաբորատոր հետազոտություններով ապացուցված է ցածր հաճախականության մեխանիկական տատանումների կիրառման արդյունավետությունը քլորիդային բնույթի աղակալված հողերի լվացման գործընթացում: Ցույց է տրված, որ 5-6 ռոպե տևողությամբ մեխանիկական տատանումների կիրառմամբ հնարավոր է 1.5-2 անգամ կրճատել լվացման համար անհրաժեշտ ջրի ծավալը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Саакян С.В. Способ рассоления почвы. Автор. свид. СССР N 1583432. 1990.
2. Саакян С.В. Содовые солонцы-солончаки: Процессы рассоления-рассолонивания и способы их ускорения. Ереван, 194 с. 1994.
3. Шлихтинг Г. Теория пограничного слоя. М. Л., 528 с. 1956.
4. Szabolcs I. Global Overview Sustainable Management of Salt Affected Soils. Bureau of soils and Water Management, Manila, November 6-10, 1995.

Поступила 28.VII.2006

Биолог. журн. Армении, 3-4 (58), 2006

УДК 631.432

КОМПЛЕКСНОЕ ВЛИЯНИЕ СОЛЕЙ НА ФИЗИЧЕСКИЕ СВОЙСТВА ОРОШАЕМЫХ ЛУГОВО-БУРЫХ ПОЧВ АРАРАТСКОЙ РАВНИНЫ

Ա.Վ. БАԳԴԱՏԱՐՅԱՆ, Շ.Վ. ՏԱԱԿՅԱՆ

Научный центр почвоведения, агрохимии и мелиорации, 375082, Ереван

Изучено влияние водорастворимых солей на скорость фильтрации и водоудерживающей способности орошаемых лугово-бурых почв Араратской равнины. Представлены математические зависимости, отражающие влияние водорастворимых солей, степени солонцеватости и механического состава почв на скорость фильтрации, а также влияние степени солонцеватости и влажности на водоудерживающую способность почвы.

Ուսումնասիրվել է ջրալույծ աղերի ազդեցությունը Արարատյան հարթավայրի ոռոգելի մարգագետնային-գորշ հողերի ֆիլտրացիայի արագության և հողի ջրակլանողունակության վրա: Բերված են մաթեմատիկական կախվածություններ, որոնք արտահայտում են ջրալույծ աղերի և ալկալիացման աստիճանի ազդեցությունը ֆիլտրացիայի արագության, ինչպես նաև ալկալիացման աստիճանի, խոնավության և մեխանիկական կազմի ազդեցությունը հողի ջրակլանողունակության վրա:

Influence of water-soluble salts on the filtration rate and water-holding capacity of irrigated meadow-brown soils of the Ararat plain is investigated. Mathematical dependences reflecting the influence of water-soluble salts, degree of alkalinity and mechanical structure of soil on the filtration rate and also influence of degree of alkalinity and moisture of soils on the water-holding capacity of soils have been established.

Почва - соль - фильтрация - давление влаги

